Խաչէրկաթ էր դրվում և բօնրի բերանին կերակուր եփելիս, անշուշտ և նրա համար, որ մաշկէրից պահվի վրան դրած կեռուը: Անկասկած խաչի ունեցած մագիկ զորության պատճառով կարկուտը կտրելու համար խաչէրկաթ էին դուրս նետում բակը: Խաչեր էին տնկում նույն նպատակով արտերում, այգիներում: Ուրի ուրբաթ օրը երեխայի արխալուղի մեջքին ասեղնագործում՝ կարում էին դույնզդույն թելերով մի շրջան, մեջը խաչ[119]:

Քանի որ խաչի գծագրությանն այսպիսի զորություն էր վերագրվում ոչ միայն հայերի, այլև այլակրոն ժողովուրդների մեջ՝ օրինակ քուրդերը, եզիդները խաչանիշ են քաշում խմորի, մթերքների պաշարի, ամանների վրա, նույնպես և Դաղստանի լեռնականները: Պետք է եզրակացնել, որ այս սովորությունը ծագել է անկախ քրիստոնեության ազդեցությունից, անկախ Քրիստոսի խաչվելու ավանդությունից, դեռ շատ ավելի վաղ դարերում: Խաչի նշանով մի իր պաշտպանելու և մաշկէրին կապված պահելու այս միջոցառումը բխում է ավելի վաղ աշխարհայացքից: Հաշվի պետք է առնել և այսպիսի փաստեր. նույնիսկ Շատախին մոտիկ քրդաբնակ վայրերում կարելի էր մի իր, օրինակ մի խուրջին թողնել մեծ ճանապարհին և վրան ձգել խաչաձև հատվող ցողուններ, հասկեր կամ սոսկ ծղոտներ և պարանի կտորներ: Դա տաբուի նշան էր: Ոչ ոք անցորդներից չէր համարձակվի ձեռք տալ այդ իրին: Դա սրբապղծություն կլիներ[120]: Այն, որ քահանան ժամն արձակելիս ժամվորներին խաչակնքում էր, պետք է կարծել, որ օդի մեջ իր գծած խաչով նա ոչ թե խաչվածի օրհնությունն էր հաղորդում նրանց, այլ դրանով պաշտպանում էր մաշկէրի ներգործությունից, կապում էր նրանց մերձենալուց և կապում էր նրանց չար զորությունը:

Որտեղի՞ց է ծագել խաչի գծագրությանը հատկացվող այս զորությունը:

Քանի որ նախնական մարդու համար նկարը փոխարինում է իրին, օրինակ՝ Իսպանիայի քարայրներում նկարած բիզոնը կամ մեր լեռների իծագրերը, ուստի վերոհիշյալ դեպքերում խաչի գծագրությունը կարող էր փոխարինել որևէ նյութով՝ ծղոտով, ցողունով, պարանով կազմված խաչին: Պետք է ենթադրել, որ խաչով կապելը փոխարինել է պարանների միջոցով կապելուն[121]: Գործնական կյանքում, երբ ուզում են որևէ իր կապել, պաշտպանել ցրվելուց, թափվելուց, ուրիշի ձեռք տալուց, իրը խաչաձև են կապում: Արկղը, ծանրոցը, կապոցը և այլն թելով, պարանով, չվանով շրջկապում են նախ թելը անց կացնելով մի կողմից մյուսը, ապա երկրորդ անգամ հակառակ ուղղությամբ՝ հատելով առաջին ուղղությունն ուղիղ անկյունով: Այսպիսով կարելի է եզրակացնել, որ խաչի գծագրությունը փոխարինել էր խաչաձև նյութերեն հանգուցմանը, կապով հմայելու գործողությունը, նամանավանդ չար հմայության նպատակով մեկին կապելը: Այսպես կարելի է բացատրել խաչի նշանի կապող, պաշտպանող դերը: Այսպիսի միտք կարող է ծագած լինել[122] այն ժամանակներում, երբ պետք է զգացվեր շնչավոր կամ անշունչ իրը մեկ ուրիշից պաշտպանելու, մի ուրիշի գործածությունից հանելու: Եթե ուզենանք որոնել այս հոգեբանական պրոցեսի սկզբնավորության ժամանակը, պիտի

---

119 СМОМПК, вып. XIII, отд. I, стр. 116.

120 Վկայություն շատախցի Շահեն Կուժիկյանի:

121 Հմմտ. վերը՝ վախը կապելու եղանակը:

122 Այսպես, օդի մեջ ծննդկանի շուրջն անցկացրած շրջանը փոխարինվում է շղթայով, մագն պարանով կազմած օղակով: